ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

29.03.2023թ. N91-Լ

Ինկորպորացիա առ 21.02.2025թ. N45-Լ

«ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ Է ՔՆՆԻՉԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

Հրամայում եմ.

1. Հաստատել «Դասը վարում է քննիչը» խորագրով դասընթացի առարկայական ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել «Դասը վարում է քննիչը» խորագրով ծրագրի դասընթացավարներին ներկայացվող պահանջները՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանին:
4. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց:

Ա. Քյարամյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
29.03 .2023թ.
թիվ 91-Լ հրամանի

«ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ Է ՔՆՆԻՉԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում է «Դասը վարում է քննիչը» խորագրով դասընթացի առարկայական ծրագիրը և անցկացման կարգը:

2. «Դասը վարում է քննիչը» խորագրով ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում (այսուհետ՝ ՀՀ քննչական կոմիտե) պաշտոն զբաղեցնող անձինք կարող են դասավանդել Հայաստանի Հանրապետությունում գործող հանրակրթական միջին (8-9-րդ դասարան) և ավագ (10-12 դասարան) ուսումնական հաստատություններում: (կետը խմբ. 21.02.2025. N 45-Լ)

3. Մեկ առարկայական ծրագիրը պետք է համապատասխանի 1 դասաժամի տևողությանը՝ 45 րոպե:

4. (ուժը կորցրել է 21.02.2025. N 45-Լ)

5. (ուժը կորցրել է 21.02.2025. N 45-Լ)

6. Դասընթացի վարումը, որպես կանոն, կազմակերպվում է դասընթացավարի ծառայության վայրի տարածքում գտնվող ուսումնական հաստատություններում՝ վերջիններիս վարչակազմի հետ նախապես համաձայնեցնելով դասավանդման օրը, ժամը, առարկայական ծրագիրը: ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք դասընթացը կարող են անցկացնել նաև իրենց նախընտրությամբ հանրակրթական ռազմական ուսումնական հաստատություններում: (կետը խմբ. 21.02.2025. N 45-Լ)

7. Դասընթացը վարվում է հետևյալ թեմաների շրջանակներում՝

- Հանցագործության հասկացությունը և տեսակները,

- Հանցագործությունը ծնող պատճառներն ու դրանց իրականացմանը նպաստող պայմանները,
- Հափշտակության հասկացությունը և տեսակները,
- Հրազենի, պայթուցիկ նյութերի և սարքերի, փամփուշտների ապօրինի շրջանառությունը, սառը զենք կրելը,
- Թմրանյութերի ապօրինի շրջանառությունը,
- Խուլիգանությունը և դրա հատկանիշները,
- Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ,
- Առևանգում և ազատությունից ապօրինի զրկել,
- Քրեական ենթամշակույթ, հանցավոր կազմակերպությունը, հանցավոր ենթամշակույթի դեմ պայքար,
- Անչափահասին հանցանքի կատարման մեջ ներգրավելը, երեխային հակահասարակական գործողությունների մեջ ներգրավելը,
- Երեխաների թրաֆիքինգը և շահագործումը,
- Կոռուպցիոն հանցագործություններ, դրանց հասարակական վտանգավորությունը, կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի անհրաժեշտությունը և դրանում հանրային աջակցության կարևորությունը,
- Ընտանեկան բռնություն,
- Կիբեռհանցագործություններ,
- Պարտադիր զինվորական կամ զորահավաքային զորակոչից խուսափելը,
- Իրավապահ մարմինները և արդարադատություն իրականացնող մարմինները Հայաստանի Հանրապետությունում:

8. Դասավանդումն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ մեկ դասաժամի ընթացքում անդրադարձ կատարվի առնվազն 2 թեմայի:

9. Սույն հավելվածի 6-րդ կետով նախատեսված թեմաները չեն բացառում դասընթացավարների կողմից այլ թեմաների դասավանդումը՝ առարկայի վերնագիրը և բովանդակությունը նախապես համաձայնեցնելով հրամանի կատարման նկատմամբ

սկողություն իրականացնող ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանի հետ:

10. Դասավանդման ընթացքում անհրաժեշտ է անդրադառնալ թեմային առընչվող հիմնական հարցերին, նշել գործնականում հանդիպող օրինակներ՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները:

11. Դասավանդման արդյունքների վերաբերյալ (դասընթացավարի տվյալները, զբաղեցրած պաշտոնը, թեմայի անվանումը, դասաժամի քանակը, ուսումնական հաստատության անվանումը) ստորաբաժանումների պետերը տեղեկատվություն են ներկայացնում ՀՀ քննչական կոմիտեի իրավաբանական վարչությանը՝ մինչև հաջորդող ամսվա հինգը: (կետը խմբ. 21.02.2025. N445-Լ)

12. (կետն ուժը կորցր. 18.10.2023. N 246-Լ)

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
29.03 .2023թ.
թիվ 91-Լ հրամանի

«ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ Է ՔՆՆԻՉԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են «Դասը վարում է քննիչը» խորագրով դասընթացավարներին ներկայացվող պահանջները:

2. Դասավանդում կարող է իրականացնել ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող այն անձը, ով ունի գիտական աստիճան (կոչում) կամ դասավանդման փորձ և տիրապետում է բանավոր խոսքի, լսարանի հետ հաղորդակցվելու հմտություններին: (կետը խմբ. 21.02.2025. N 45-Լ)

3. (կետն ուժը կորցր. 18.10.2023. N 246-Լ)

4. Դասավանդման ներկայանալիս դաընթացավարները պետք է կրեն դասական հագուստ (տղամարդիկ՝ կոստյումով և փողկապով) կամ ծառայողական համազգեստ (կիտելով, իսկ ամռանը՝ ծառայողական համազգեստի վերնաշապիկով):